ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
21.11.2018Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 10 անդամները:

Բացակայում են՝ Նորիկ Վարդանյանը,Տարոն Եփրեմյանը, Գագիկ Երիցյանը, Հակոբ Գրիգորյանը, Վալերի Բաբայան:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Շ. Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը , Ս.Շահնազարյանը և գյուղերի վարչական ղեկավարները:
Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու համաձայնություն տալու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող մանկապարտեզների շինություններն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -10 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Ս.Շահնազարյան/

Առաջարկում եմ կապված համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների տարեվերջյան պահպանման ծախսերի վերլուծություններից փոփոխության ենթարկել ՀՈԱԿ-ներին տրվող սուբսիդիաների չափը, ծախսային պլանները կատարելու նպատակով:

Համայնքի ղեկավար . Շահգալդյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 10 դեմ - 0 ձեռնպահ -

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 4-րդ թաղ. 10 շենքի 72 բն. բնակիչ ***Ապրես Ապրեսյանի*** 2018 թվականի նոյեմբերի 09-ի թիվ 3695-16, Չարենցավան քաղաքի 3-րդ թաղ. 25 շենքի 39 բն. բնակիչ ***Գարրի Ղազարյանի*** 2018 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 3827-16 և Բջնի գյուղի 1-ին փակուղի 2-դ նրբանցք 5 տան բնակիչ ***Նելլի Մարտիրոսյանի*** դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից՝ 150.0 հազ. դրամ հատկացնել ***Ապրես Ապրեսյանին,*** 80.0 հազ. դրամ հատկացնել ***Գարրի Ղազարյանին.*** 100.0 հազ. դրամ հատկացնել ***Նելլի Մարտիրոսյանին:***

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

/

/

Լսեցին.

3. Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու համաձայնություն տալու մասին:

/Զեկ.Վ.Զիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 77-րդ հոդվածով, ***առաջարկում եմ*** տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումների.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Աստղիկ Ներսեսյան	6-13-36	5 100 000	Սեփականություն	Անհատույց
2.	Համլետ Իշխանյան	1ա-2-24	7 100 000	Սեփականություն	Անհատույց

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող մանկապարտեզների շինություններն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի թիվ 808 որոշման պահանջները, ***առաջարկում եմ.*** թույլատրել անհատույց օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրելու համայնքի սեփականություն հանդիսացող թվով 8 մանկապարտեզների շինությունները մանկապարտեզ ՀՈԱԿ-ներին լիցենզավորված գործունեություն իրականացնելու նպատակով՝ ըստ կից հավելվածի :

Հավելված

Հ/Հ	ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ	ՀՈԱԿ-Ի ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	Ք.Չարենցավան Քոչարի փող. թիվ 15շինություն	«Զանգակ» մանկապարտեզ ՀՈԱԿ
2.	Ք.Չարենցավան 3-րդ թաղ. 4-րդ փողոց թիվ 16 շինություն	Ա.Գրիգորյանի անվան «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ
3.	Ք.Չարենցավան Շինարարների փողոց թիվ 4 շինություն	«Հեքիաթ» մանկապարտեզ ՀՈԱԿ
4.	Ք.Չարենցավան 5-րդ թաղ. 2-րդ փողոց թիվ 9 շինություն	«Լուսաբաց» մանկապարտեզ ՀՈԱԿ
5.	Ք.Չարենցավան 6-րդ թաղ 1-ին փողոց թիվ 1 շինություն	«Հրաշք» մանկապարտեզ ՀՈԱԿ
6.	Չարենցավան համայնք գ.Ալափարս 19-րդ փողոց թիվ 5 շինություն	Ալափարս գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ
7.	Չարենցավան համայնք գ.Արզական Հ.Բաբաջանյան փողոց թիվ 3 շինություն	Արզական գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ
8.	Չարենցավան համայնք գ.Բջնի 8-րդ փողոց թիվ 2 շինություն	Բջնի գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ- 0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ
Գասպարյան Անատոլի
Գասպարյան Մելիք
Դավթյան Կարեն
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Խլղաթյան Արսեն
Պողոսյան Մնացական
Սահակյան Երեմ
Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Շ. Սարգսյանը _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**